Ինչպէս որ այրուբենը սորված մանուկը չէ կարող գոհանալ իր այրբենարանով, նա հասունանալով՝ ընթերցանութեան գրքերի պահանջն եւս կը զգայ, նոյնը նաեւ՝ դիտակցութեան հասած ժողովուրդը:

Ուրիշ խօսքով՝ ազգագրական Հայաստանի գաղափարը պետական Հայաստանի գաղափարով լրացնելու եւ բովանդակալից դարձնելու անհրաժեշտութիւնն է առաջ դալիս:

Իսկ որպէսզի մի ազգ պետական դառնայ, կարեւոր է որ նա ամենից առաջ լինի ազատ եւ անկախ:

Անազատ եւ հպատակ ազգերը չեն կարող երազել սեփական պետականութեան մասին: Որպէսզի Հայաստանը — միացեալ թէ ոչ — լինի պետական ինքնուրոյն միաւոր, դառնայ մեր ազգային քաղաքականութեան առանցքը, պիտի հոգանք նաեւ, որ նա լինի ազատ եւ անկախ: Ազատ եւ անկախ հայրենիքը միայն իր հերթին ընդունակ եւ ի վիճակի լինել կարող է՝ իրականացնելու հողային եւ ցեղային ամբողջացումը:

Առաջին հանդրուանը, որին պիտի ձգտի ուրեմն Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան հետապնդող ազգային քաղաքականութիւնը, դա մեր հայրենիքի ազատագրումն է, հայ ժողովուրդի՝ ազատօրէն ապրելու իրաւունքը սեփական երկրի մէջ: Քանի դեռ չկայ այդ ազատութիւնը, հայրենիքը չէ կարող լինել ոչ անկախ, ոչ էլ միացած:

Ինքնախաբէութեամբ չզբաղուինք, ոչ էլ մեզ հաճելին ու ցանկալին չփոթենք իրականութեան հետ: Խորհրդային Միութեան մէջ մտնող երկիրները եւ ժողովուրդները, դրանց թւում ուրեմն նաեւ հայն ու Հայաստանը, ապրում են մօտաւորապէս այնչափ ազատ կամ անազատ պայմաններում, որչափ՝ ցարական կառավարութեան օրով: Քաղաքական եւ քաղաքացիական ազատութեան մասին խօսելը հեղնանք իսկ է մի վարչակարգի համար, որ պաշտօնապէս իւրացրել եւ սրբագործել է դիմատուրայի ռէժիմը:

Զվիճինք այն մասին, թէ արդեօ՞ք եւ իսկապէս դիքտատուրա՞ է գոյութիւն ունեցող ռէժիմը թէ՞ պատմութեան մէջ սովորական մի սակաւապետութիւն: Ընդունինք անդամ, թէ Ռուսաստանի արդի ռէժիմը իսկապէս որ դիքտատուրա է եւ ոչ սակաւապետութիւն: Ընդունինք մինչեւ իսկ անկարելին, թէ՝ դա ոչ թէ համայնավար կուսակցութեան դիքտատուրան է, այլ պրոլետարիատի դիքտատուրա, ինչ որ շարունակ կրկնում են բոլշեւիկները:

Անդամ այս դէպքում, նշանակում է, քաղաքական իշխանութիւնը դտնուում է ողջ ազգաբնակութեան մի չնչին տոկոսը կազմող խաւի ձեռքում, քանի որ պրոլետարիատը, մանաւանդ ճարտարարուեստային պրոլետարիատը, գիւղացիութեան եւ միւս խաւերի հանդէպ աննշան փոքրամասնութիւն է ներկայացնում Ռուսաստանում:

Համեմատութիւնը աւելի եւս ակնբախ է Հայաստանի վերաբերմամբ, որ գրեթէ բացառապէս գիւղացիական երկիր է, եւ ուր բանուորութեան ամբողջական թիւը մի-երկու տասնեակ հազարից չէ անցնում:

Որչափ եւ բոլշեւիկները պնդելու լինին, թէ պրոլետարիատը Խորհրդային կարգերում «դաշնակցել» է գիւղացիութեան հետ, փաստը մնում է իր ոյժի մէջ անդամ համայնավարների համար: Այն որ՝ գիւղացիութիւնը Խորհրդ. կարգերում երկրորդարժէք «դաշնակից» է, որ լաւագոյն պարագային, հինգ գիւղացու «ընտրական» քուէն հազիւ հաւասարում է մէկ բանուորի քուէին:

Մնում է փաստ նաեւ այն, որ Խորհրդ. Միութեան ընակչութեան հոծ մեծամասնութիւնը ընդհանրապէս եւ Հայաստանինը մասնաւորապէս — գիւղացիութիւնը — անազատ է ոչ միայն քաղաքականապէս, այլ եւ տնտեսապէս: Որ այսօրուան Խորհրդ. տնտեսութեան ողջ ծանրութիւնը գիւղացիութեան ուսին է բարձուած,— չէ վերցնում փոքրիկ կասկած անդամ: Հայաստանի պայմաններում դրութիւնը աւելի եւս վատթար է:

Եւ դեռ մենք վերցրինք իտէալական վիճակը, տեսականապէս հնարաւորը: Իրականութիւնը, ինչ խօսք, աւելի մռայլ է: Այսօրուան Ռուսաստանը տիպիֆ սակաւապետութիւն (օլիգարխիա) է, ինչ որ անվիճելիօրէն փաստուած է նաեւ Կարլ Կաուցկիի եւ մի շարք ուրիշ հեղինակաւոր դէմքերի կողմից: Այդ